ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 10/4

ք. Երևան 16 ապրիլի 2026 թ.

««ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2017 Թ. ՄԱՐՏԻ 30-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ» ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով ու ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մեթոդական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն Հավելվածի,
2. ուժը կորցրած ճանաչել 2017 թ. մարտի 30-ին ԵՊՀ գիտական խորհրդի հաստատած՝ Երևանի պետական համալսարանի մեթոդական խորհրդի կանոնակարգը,
3. սահմանել, որ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, ԵՊՀ մեթոդական խորհրդի գործող կազմի լիազորությունները դադարեցվում են, և ռեկտորի հրամանով հաստատվում է մեթոդական խորհրդի անվանական նոր կազմը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2026 թ. ապրիլի 16-ի թիվ 10/4 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) մեթոդական խորհրդի (այսուհետ՝ մեթոդական խորհուրդ) իրավասությունը, ձևավորման ու գործունեության կարգը:

2. Մեթոդական խորհուրդը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որն իրականացնում է ԵՊՀ կանոնադրությամբ, ԵՊՀ ներքին իրավական ակտերով ու սույն աշխատակարգով սահմանված գործառույթներ:

3. Սույն աշխատակարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Մեթոդական խորհրդի գործառույթներն են՝

1) ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կրթական խնդիրների իրականացման մշտադիտարկումը,

2) ԵՊՀ ակադեմիական միավորի որակի ապահովման ու մեթոդական հանձնաժողովի գործունեության մշտադիտարկումը,

3) կրթական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտերի նախագծերի մշակումը,

4) կրթական ծրագրերի, ուսումնական պլանների քննարկումն ու դրանց վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունների ներկայացումը,

5) կրթական գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ խորհրդատվական բնույթի առաջարկությունների ու եզրակացությունների ներկայացումը,

6) դասավանդման որակի ու արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների մշտադիտարկումը,

7) ԵՊՀ ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացումը:

3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Մեթոդական խորհրդի նախագահը ԵՊՀ ռեկտորն է:

Մեթոդական խորհրդի կազմում ընդգրկվում են ԵՊՀ ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորը, գիտական հարցերը համակարգող պրոռեկտորը, ռազմա-

վարական զարգացման աշխատանքները համակարգող պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը, որակի ապահովման կենտրոնի տնօրենն ու մասնագիտական տարբեր ոլորտների ներկայացուցիչներ:

Մեթոդական խորհրդի անվանական կազմը հաստատում է ռեկտորը՝ երեք տարի ժամկետով:

6. Մեթոդական խորհրդում հարցերը քննարկվում են ԵՊՀ ռեկտորի առաջարկով կամ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

7. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են խորհրդի աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության: Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է ռեկտորը:

Ռեկտորի հանձնարարությամբ խորհրդի նիստը կարող է վարել ակադեմիական/ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

8. Մեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են խորհրդի անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

9. ԵՊՀ վարչական աշխատողներից մեթոդական խորհրդի կազմում ընդգրկված անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

10. Մեթոդական խորհրդի կողմից կազմված փաստաթղթերն ու եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում մեթոդական խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք: